ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
14.12.2018Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 12 անդամները:

Բացակայում են՝ Ա.Փանոսյանը,Մ.Պողոսյանը, Գ.Երիցյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝
Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Շ. Սարգսյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա.Զաքարյանը , Ս.Շահնազարյանը և գյուղերի վարչական ղեկավարները:
Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 12 հերթական նիստի օրակարգը՝

1. Չարենցավանի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:
2. Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի 2019 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
3. Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2019 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
4. Չարենցավան համայնքում տեղական տուրքերի 2019 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:
5. Չարենցավան համայնքում տեղական վճարների 2019 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:
6. Չարենցավան համայնքի 2019 թվականի աղբահանության և սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին:
7. Չարենցավան համայնքի վարչական տարածքում գտնվող բազմաբնակարան շենքերի պահպանման իրականացման նպատակով պարտադիր նորմերի շրջանակներում իրականցվող աշխատանքների համար անհրաժեշտ (բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմեր)վճարների չափերը հաստատելու մասին
8. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածիշ գումար հատկացնելու մասին:
9. Չարենցավան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -12 դեմ - 0 ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1 . Չարենցավանի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:

/Զեկ.Շ. Սարգսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթներով ***առաջարկում եմ՝*** համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել ամսական 400000 *ՀՀ դրամ:*

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 դեմ-0 ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի 2019 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

/Զեկ.Շ. Սարգսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, դրույթներով ***առաջարկում եմ***, հաստատել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի 2019 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված N 1:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 դեմ-0 ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2019 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

/Զեկ.Շ. Սարգսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի,դրույթներով,***առաջարկում եմ*** հաստատել Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2019 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված NN 1-16:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 **դեմ-0** **ձեռնպահ-1**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. Չարենցավան համայնքում տեղական տուրքերի 2019 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

/Զեկ.Բ.Բարսամյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածների դրույթներով՝***առաջարկում եմ*** հաստատել Չարենցավան համայնքում 2019 թվականին կիրառվող տեղական տուրքերի դրույքաչափերը:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-12 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. Չարենցավան համայնքում տեղական վճարների 2019 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

/Զեկ.Վ. Չիլինգարյան/

Հաշվի առնելով, Հայաստանի Հանրապետության «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28.1-րդ հոդվածի համաձայն տեղական տուրքերը և վճարները հանդիսանում են համայնքի բյուջեի վարչական մասի եկամուտներ, ***առաջարկում եմ*** սահմանել Չարենցավան համայնքում տեղական վճարների 2019 թվականի հետևյալ դրույքաչափերը՝ համաձայն հավելվածների:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-12 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6. Չարենցավան համայնքի 2019 թվականի աղբահանության և սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին:

/Զեկ.Վ. Չիլինգարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ***առաջարկում եմ*** Հաստատել Չարենցավան համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման սխեման համաձայն հավելված N N 1.2 ի:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 12 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

7. Չարենցավան համայնքի վարչական տարածքում գտնվող բազմաբնակարան շենքերի պահպանման իրականացման նպատակով պարտադիր նորմերի շրջանակներում իրականցվող աշխատանքների համար անհրաժեշտ (բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմեր) վճարների չափերը հաստատելու մասին:

/Զեկ.Վ.Չիլինգարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 04-ի թիվ 1161-Ն որոշմամբ՝ ***առաջարկում եմ*** հաստատել Չարենցավան համայնքի վարչական տարածքում բազմաբնակարան շենքերի պահպանման իրականացման նպատակով պարտադիր նորմերի շրջանակում իրականացվող աշխատանքների համար անհրաժեշտ (բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմեր) վճարների չափերը՝ համաձայն հավելվածի:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>
Քվեարկության եմ դնում որոշումը:
Կողմ- 12 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

8.Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 5-րդ թաղ. 4 շենքի 41 բն. բնակիչ ***Գագիկ Դավթյանի*** 2018 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 4027-16 դիմումը ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ ***առաջարկում եմ*** Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել ***Գագիկ Դավթյանին:***

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:
Կողմ- 12 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

9.Չարենցավան համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին:

/Զեկ.Գ.Աֆյան//

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 54-րդ և 64-րդ հոդվածների դրույթներով՝ ***առաջարկում եմ*** հաստատել Չարենցավան համայնքի 2019 թվականի բյուջեն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11	դեմ- 0	ձեռնպահ-1
Բաբայան Նարեկ		Վարդանյան Նորիկ
Բաբայան Վալերի		
Գասպարյան Անատոլի		
Գասպարյան Մելիք		
Գրիգորյան Հակոբ		
Դավթյան Կարեն		
Եփրեմյան Տարոն		
Խլղաթյան Արսեն		
Վարդանյան Նորայր		
Վարդանյան Սարգիս		
Սահակյան Երեմ		

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ